ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N H2019/1223/1

ք. Երևան

"23" դեկտեմբերի 2019թ.

Հայկական Ծրագրեր Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունն, ի դեմս տնօրեն Գագիկ Սարգսյանի, հետագայում՝ Կատարող, մի կողմից, և ՀՀԱՆ Քրեակատարողական Ծառայություն, ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ա. Ղազարյանի, հետագայում՝ Պատվիրատու, մյուս կողմից, վարեցին բանակցություններ և կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. **Պայմանագրի առարկան**

1.1. Սույն պայմանագրով Կատարողը Պատվիրատուին թույլատրում է օրենքով նախատեսված գույքային իրավունքների գործողության ողջ ժամկետում, իսկ օրենքով թույլատրվող դեպքերում նաև անժամկետ, օգտագործել «ՀԾ-Հաշվապահ 7» համակարգ 9 (ինը) աշխատատեղի համար համակարգչային ծրագիրը, հետագայում՝ Համակարգ:

1.2. Կատարողը սպասարկում է Պատվիրատուի մոտ տեղադրված Համակարգը, ինչը ներառում է.

1.2.1. Համակարգի շահագործման հետ կապված խորհրդատվություն:

1.2.2. Կատարողի կողմից որոշված պարբերականությամբ Համակարգի թարմացված տարբերակների տրամադրում, որտեղ արտացոլված են հաշվապահական և հարկային հաշվառմանը վերաբերվող լրամշակումները և նոր ֆունկցիոնալ հնարավորությունները:

1.3. Սպասարկման ձևը.

1.3.1. Սպասարկման աշխատանքներն իրականացվում են հեռահաղորդակցության (հեռախոսակապ, ինտերնետ, էլ.փոստ և այլն) միջոցներով:

1.3.2. Համակարգի թարմացված տարբերակները տրամադրվում են Կատարողի կողմից ընտրված եղանակներով:

1.4. Համակարգի օգտագործման թույլտվության մեջ չի ներառվում Համակարգի օգտագործման համար անհրաժեշտ ցանկացած տվյալների /այդ թվում նաև տվյալների բազա/ տրամադրումը, դրանց օգտագործման, դուրսհանման և/կամ վերաօգտագործման հետ կապված հարաբերությունները: Վերը նշված տվյալների տրամադրումը, օգտագործումը դուրսհանումը և/կամ վերաօգտագործումը իրականացվում է Համակարգի սպասարկման շրջանակներում, իսկ դրանց համար փոխհատուցումը ներառված է սպասարկման վճարի մեջ: Ընդ որում Կատարողը սեփական հայեցողությամբ է մշակում վերը նշված տվյալները և Պատվիրատուի կողմից չի կարող պահանջ ներկայացվել դրանց բովանդակության, ձևի և/կամ ծավալի վերաբերյալ:

2. **Պայմանագրի ժամկետը**

2.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի և Կատարողի կողմից կնքելու պահից և գործում է մեկ տարի:

3. **Համակարգի արժեքը և վճարման կարգը**

3.1. Պայմանագրի գինը կազմում է 625,000.00 դրամ, ԱԱՀ 20%՝ 125,000.00 դրամ, ընդամենը՝ 750,000.00 դրամ:

3.2. Պատվիրատուն վճարում է Պայմանագրի գինը Պայմանագիրը կնքելուց հետո 5(հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Հետագայում ավելի շատ աշխատատեղերի համար նախատեսված համակարգին անցում կատարելու դեպքում Պատվիրատուն վճարում է համակարգերի անցման օրվա դրությամբ սահմանված արժեքների տարբերությունը:

4. **Կատարողի պարտավորությունները**

4.1. Ծրագրային ապահովման մեջ խափանումների և սխալների հայտնաբերման դեպքերում (բացի տեխնիկական և ծրագրային միջոցների անհամատեղելիության, տեխնիկական միջոցների խափանումների, ծրագրային վիրուսների, աշխատակիցների՝ ծրագրով չնախատեսված գործողությունների պատճառով առաջացած դեպքերի) վերացնել դրանք ապագա տարբերակներում:

4.2. Տրամադրել Պատվիրատուին Համակարգի այն տարբերակները, որոնք լույս են տեսել մինչև Պայմանագրի ավարտը:

4.3. Պայմանագիրը կնքելուց հետո 3 ամսվա ընթացքում Պատվիրատուի չորս աշխատակից կարող են մասնակցել Կատարողի կողմից կազմակերպվող «ՀԾ-Հաշվապահ 7» համակարգի դասընթացին, որի արժեքը ներառված է պայմանագրի 3.1 կետում նշված գումարի մեջ: Կատարողը պարտավորվում է սկսել Համակարգի դասընթացը ոչ ուշ, քան 30(երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում՝ Պատվիրատուի աշխատակիցների գրանցման օրվանից սկսած:

4.4. Պայմանագիրը կնքելուց հետո 6 ամսվա ընթացքում Պատվիրատուն կարող է հետ վերադարձնել Համակարգը՝ ետ ստանալով վճարված ամբողջ գումարը: Եթե Պատվիրատուի աշխատակիցները մասնակցել են 4.3 կետում նշված դասընթացին, ապա հետ վերադարձվող գումարը կազմում է 630000 դրամ:

4.5. Համակարգի հետ տրամադրվող էլեկտրոնային բանալու օգտագործման երաշխիքային ժամկետը կազմում է 6 ամիս՝ սկսած պայմանագիրը կնքելու օրվանից: Եթե այդ ժամկետի ընթացքում էլեկտրոնային բանալու աշխատանքում հայտնաբերվեն թերություններ, ապա այն Կատարողի կողմից անվճար կփոխանակվի: Տվյալ երաշխիքը չի գործում հետևյալ դեպքերում՝ ա) եթե էլեկտրոնային բանալու շահագործման հետևանք է, բ) եթե չեն պահպանվել էլեկտրոնային բանալու շահագործման կանոնները և պայմանները, գ) եթե վնասվածքը հետևանք է լարման տատանումների, ջրհեղեղի, հրդեհի, ոչ ճիշտ ջերմային ռեժիմի և այլ նման պատճառների:

4.6. Համակարգի սպասարկումը չի ներառում Պատվիրատուի կողմից խորհրդատվություն հետևյալ հարցերի վերաբերյալ՝

- հաշվապահական և հարկային հաշվառման վարման մեթոդաբանություն,
- ուսուցման ընթացքում ստացված տեղեկատվություն,
- Համակարգի շահագործման հետ չկապված՝ Windows օպերացիոն համակարգի օգտագործում,
- տեխնիկական միջոցների և համակարգչային ցանցի ոչ նորմալ աշխատանք:

4.7. Կատարողը Համակարգը Պատվիրատուին է հանձնում անժամկետ օգտագործելու իրավունքով:

4.8. Պայմանագրի ավարտից հետո Կատարողը Պատվիրատուի նկատմամբ որևէ պարտավորություն չի կրում:

5. **Պատվիրատուի պարտավորությունները**

5.1. Պատվիրատուի պարտավորությունն է համարվում Համակարգի պաշտպանական էլեկտրոնային բանալու և տվյալների պահոցի պահպանությունն ու ամբողջականությունը:

6. **Այլ պայմաններ**

6.1. Սույնով Պատվիրատուն հավաստում է, որ ծանոթացել է Համակարգի տեղադրման համար անհրաժեշտ տեխնիկական պայմաններին և ուսուցման ծրագրին, որոնք արտացոլված են նաև www.armsoft.am կայքում և ստացել է լազերային սկավառակը, որը պարունակում է Համակարգի տեղադրման ծրագիրը, էլեկտրոնային բանալին, համակարգի դասընթացին մասնակցելու կտրոնը:

6.2. Սույն պայմանագրի 1.1-րդ կետից մինչև 1.3.2-րդ կետը ներառյալ Պատվիրատուին ընձեռված իրավունքները /անկախ դրանց բնույթից/ չեն կարող փոխանցվել երրորդ անձանց բացառությամբ ընդհանուր իրավահաջորդության դեպքի:

6.3. Կատարողի պատասխանատվությունը անկախ մեղքի ձևից սահմանափակվում է սույն Պայմանագրի գնի 20(քսան) տոկոսի չափով:

6.4. Սույն պայմանագրի կատարման հետ կապված հարցերը Կողմերը կձգտեն լուծել բանակցությունների միջոցով: Կողմերի միջև համաձայնության չգալու դեպքում, վիճելի հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.5. Սույն պայմանագիրը կազմվում է 2(երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակից՝ յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ:

7. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

Հայկական Ծրագրեր ՍՊԸ
h/h 2500010002240100
Արմսվիսբանկ ՓԲԸ
Էլ.Փոստ՝ support@armsoft.am
ՀՎՀՀ՝ 00807555
Հասցե՝ ք. Երևան, Չարենցի փ. 1

Տնօրեն՝ Գ.Սարգսյան

ՀՀԱՆ Քրեակատարողական Ծառայություն
h/h 900011175016
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հեռ.՝ 060371121
Էլ.Փոստ՝ qkv_gnumner@mail.ru
ՀՎՀՀ՝ 02204739
Հասցե՝ Երևան, Արշակունյաց 63

Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ա. Ղազարյան